Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

91.99
L-75

ԱՋԱՏ ՎԾՏՈՒՆԻ

ԽՈՍՈՒՄ Է ՌԱԴԻՈ-ԱԼԺԻՐԸ

ՍԱՏԻՐԱՊՈՒԵՄ

891.99
Վ-75

ՊԵՏՀՐԱՏ
ՅԵՐԵՎԱՆ
1·9·3·1

1·2

ՀԱԽՀ
ՊԵՏՀՐԱՏ

891.99
Կ-75
97
12 MAR 2011

Ա Զ Ա Տ
ՎՇՏՈՒՆԻ

ԽՈՍՈՒՄ Է ՌԱԴԻՈ-ԱԼԻԹԻՐԸ

(ՍԱՏԻՐԱՊՈԵՄ)

41.99

ՊԵՏՀՐԱՏ
ՅԵՐԵՎԱՆ 1931

ՀԱՅԿՈՒՆ ՖՐՈՒՆԶԵԻ
Публ. Библиотека
ՀՍՍՀ-ՈՐ
Ակ. Ա. Մասնիկյան
Ա. Սեմյանովի անվ.

57694

12 .08. 2013

Պետհրատի տպարան.
Գրառ. № 6417 (բ.)
Հրատ. № 1643
Պատ. № 2777
Տիր. 3000

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ԵՐԵՎԱՆ 1931

ԶԱՆԳԱԶԱՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՐԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

Զ4602-59

Շապիկը՝ նկարիչ Տաճատ Խաչվանքյանի

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

Գրոհում ենք
Դեպի վերն ել,
Յեթերն ել
Նվաճենք պիտի.
Միկրոֆոնը
Հիմի մերն է,
Յեթերումն ել
Ամենք պիտի...

Թշնամին
Համառ,
Յեվ նենդ է,
Յեվ քանի
Վրեժով լարված է,—
Անխնա կդառնանք մենք ել,
Հարվածին
Կտանք
Հարվածը...

Յեթերումը
Լսիր
Հեվքերը
Հեծեծող
Ու մեղկ
Կիթառի.
Հիստերիկ,
Լկված յերգերը
Գալարվող
Ցեվ հին
Մի դարի...

Յեթերումը
Լսէր
Նզովքը,
Զարախինդ քրքիջ
Յեվ սոսկում։
Մեր դեմն է հանել
Իր գորքը
Դարը հին
Աստծու
Յեվ վոսկու...

Կաքավում է
Ռադիո—Բուքրեշը,
Շանտանի այդ մերկ
Վեներան,
Գրկել է
Մերկ կնոջ լեշը—
Փարիզի մի ծեր ժեներալ...

Գալարվում է
Խարխլած դարը—
Ծեր Փարիզ,
Բուքրեշ
Յեվ Վարշավ։
Յեթերումն է
Բրիանի ճառը.
— Բայշևիկ յերկրի դեմ
արշավ...

Մահամերձ,
Գալարվող դարն է
Յեթերում նվում,
Խոսում է։
Ե՛խ,
Միսաե՛ր,
Քեզ համար գոռն է
Մոխրանալ
Պատմության փոսումը...

Դնենք վեր
Մեր միկրաֆոնը,
Խոսքը մեր
Թող հուժկու հնչի։
Յեվ ինչպես անսանձ տայֆունը,
Թող շաչի
Թշնամու դնչին...

Փռվեն թող
Բաց լեթերումը
Հնգամյա հնչուն թվերը։
Թող ջարդվեն
Մոռիկ—հեռվումը
Թշնամու դավող թևերը...

Յեթերում,
Ռադիո—վոլսրատում ել
Դասակարգ յերկու
Դեմ առ դեմ...
Խոսքը մեր
Այնտեղ վորոտում է,
Զարկը մեր
Քանդող է արդեն...

Յեթերումն ել
Մենք կռում ենք
Հնգամյակը—հրաթև երա.
Յեվ թևերը նրա
Փռում ենք
Ալեկոծ աշխարհի վրա...

Խոսում է
Ռադիո—կոմինտերնը
Հնգամյա մեր գրոհի մասին...
Քանդում ենք այժմ քո վինտերը,
Ե՛խ,
Միսաեր,
Ժանգոտված մաշին...

Հանում ենք հիմի
Վինտերը,
Ժանիքները պառավ արջի.
Ցավում են նրա լինդերը,
Ձեռքիդ ուզում ե կառչի...

Բարձրացել ենք արդեն
Վերն ել,
Յեթերն ել
Նվաճում ենք մենք.
Նոր մտքի հուր թռիչքը մերն ե,
Գրոհում
Ցեվ աճում ենք մենք...

Պատրաստիր
Ռադիո—ընդունիչը,
Ուշադիր պտուտակը շարժիր.
Ականջիր
Թշնամու ճիչը,—
Խոսում ե
Ռադիո—Ալժիրը...

ՅԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

Ալլո—ալլո։
Սե Ռադիո—Ալժիր քի պառլ։
Սե Ռադիո—Ալժիր քի պառլ։

Ալլո—ալլո։
Խոսում ե Ռադիո-Ալժիրը։
Խոսում ե Ռադիո-Ալժիրը։

(Ալժիրն Աֆրիկայում,
Թալանված թանգ մի յաղութ,
Հարեմի հարճ կամ գերի.
Հարյուրամյա մի գաղութ
Ֆրանսիական բանկերի)։

Ալլո—ալլո։
Խոսում ե Ռադիո—Ալժիրը։
Խոսում ե Ռադիո—Ալժիրը։

Մեզմ, մեսիո,
Տիկիններ, պարոններ,
Հիմի մենք
Հաղորդում ենք
Այսրվա մեր ռադիո—հաղորդման ծրագիրը։

Հիմի լսում են մեծ հաղորդումը
Ռադիո—ծրագրի մեր նոր, հերթական—
Բանկիրները, վոր մեր գաղութում են,
Սպանները կիրթ և ասպետական,
Ցեվ սուրբ հայրերը, վոր աղոթում են,
Ցեվ պաշտոնյանները մեր պետական։

Հիմի լսում են ուշադրությամբ մեզ
Ալժիրաբնակ քնիկներն արի—
Մոռերը չարքաշ աշխատող և հեզ,
Յեվ քաբուլները միտակ ու բարի,
Արաբները մեղմ և հավատացյալ,
Յեվ նեգրերը սև, հեշտ նվաճելի,
Հրեյաները խորամանկ դարձյալ,
Խառնածիններեր մեզ միշտ հաճելի,—
Ասպետ Ֆրանսիայի հպատակները,—
Վորոնց ծանոթ են կառավարության
Ազնիվ ու կրթիչ նպատակները։

Ալլո—ալլո։
Սե Ռադիո Ալժիր քի պառլ։
Սե Ռադիո—Ալժիր քի պառլ։

Ալլո—ալլո։
Խոսում է Ռադիո—Ալժիրը։
Խոսում է Ռադիո—Ալժիրը։

Սեղամ, մեսիո,
Տիկիններ, պարոններ,
Հիմի մենք
Հաղորդում ենք
Ալսորվա մեր ռադիո—հաղորդման ծրագիրը։

Ծրագրի առաջին մասը ֆրանսերեն է։
Հրամանը վերեն է,
Պետական լեզուն Ալժիրում ֆրանսերեն է։

Ժամի 16-ին։
Եքսարա ծրագիր։
«Զաղբանդ-հեռագիր։»
«Ֆոքսարոտ-հեռագիր»։
Հետաքրքիր
Գրգիռ։

Սեղամ, մեսիո,
Տիկիններ, պարոններ,
Յեղեք վճիտ բարություն—
Լսելու մի հայտարարություն։

1903 թվին
Ալժիրը խմում էր
1,000,000 ֆրանկի գինի։
Հիմի
Ալժիրն առաջադիմել է,
1930 թվին խմել է
Ըստ բարձրագույն հրահանգի—
50,000,000 ֆրանկի։

Ազնիվ տիկի՛ն,
Խմեցեք հին բենեդիկտին։

Վսեմ պարո՛ն,
Զմռռանաք իսկի
Խմել թունդ վիսկի։

Ասեն տեսակ ընտիր խմիչքներ ճարում եմք
Յեվ վանառում եմք։

Ունենք նույնպես
Անմրցելի ապսենս ու շամպայն։

Ուրեմն
Շտապ բռնեցեք
«ԼԱ ՖՐԱՆՍ ՇԱՐՄԱՆՏ»
Գինետան ճամպան։

Ալլո։
Շարունակում ենք մենք
Ռադիո—ծրագրի հաղորդումը։

Ժամի 16 և կէ ին։
Մուզիկա—«Յերազորոր վայլս»։
Մուզիկա—«Թուչենք դեպի Մարս»։
Մեներգ—«Յեղիր այս գիշեր տկլոր ու պարզ»։
Մուզիկա—«Ըլիորդ Ժաննետի վարսը»։
Մեներգ—«Սիրում եմ ոժիտով հարսը»։
Յերգում են
Մաղմոսազել Մաղբլեն և պարոն Հանսը։

Մեղմ, մեսիր,
Տիկիններ, պարոններ,
Ներողություն,
Յեղեք գրավիչ բարություն—
Լսելու ոգտակար նորություն։

Թերեվս առուտուրդ պակասե՞լ է,
Ուրեմն
Ինքնասպան լինելու ցանկությո՞ւն։
Թերեվս գրպանդ տենչերիդ հակասե՞լ է,
Ուրեմն
Սպասում է քեզ սնանկությո՞ւն։

Ուզո՞ւմ ես շահաբեր գործի ձեռք զարկել,
Ուզո՞ւմ է շահել միլիոն ֆրանկ,
Ուզո՞ւմ ես մի շքեղ տուն սարքել,
Ուզո՞ւմ ես հագնվել ֆրանսիս։
Ահա՛
Ահա՛
Բախտդ սպասում է քեզ դուռդ։

Ուրեմն
Քեզ պետք է հարստացու յեվ ոժիտ։
Մի փափկիկ կին ստակով.
Ոժիտով կինն է գործերդ հստակող։

Ազնիվ պարո՛ն
Աշխատիր քեզ դզել։

Ինչպիսի՜ նուրբ վզեր,
Ինչպիսի՜ նուրբ իրան,
Նրբաշուրթ ի՜նչ բերան,
Ի՜նչ նազանք յեվ շորոր,
Ի՜նչ քայլվածք ֆնիշորոր,
Ի՜նչ կրքեր կան անմար,
Մարմիններ կան մարմար
Քեզ համար։
Ցանկությանդ նիշտ հարմար
Յե՛վ վայելք
Յե՛վ կլորիկ մի ոժիտ։

Մեծարգո իմ պարո՛ն,
Վստահիր դու ուժիդ
Յեվ դիմիր հենց հիմի
ՀԱՐՍՆԱՑՈՒ ՀԱՅԹԱՅԹՈՂ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՄԵՐ ՀԻՄՆԱՐԿ։
Հասցեներ—
Փարիզում—12 Ռյու Բուժի։
Մարսելյում—13 Ռյու Միմի։
Ալժիրում—17 Ռյու Դիմի։

Շտապի՛ր,
Շտապի՛ր
Հենց հիմի։

Ալի։
Շարունակում ենք մենք
Ռադիո—ծրագրի հաղորդումը։

Ժամի 17-ին։
Բարոնեսս Բոթին
Յեվ մարկիզ Դյուվասաք

Կբանախոսեն հետևյալ թեմայով—

«Գործածեցեք միայն պուտրա ԿՈՏԻ»,

Յեվ

«ՎԻԿՏՈՐԻԱ գուլպայի սեռական իմաստը»։

Միջանկյալ լրատու։

Հնդկաչինումը Ֆրանսիական—
Մոսկվան
Բաժանել է բնիկներին
Բոմբ ու նագան։
Շրջում է այնտեղ
Բայլեվիկյան ուրվական։
Մի շարք գյուղեր ցանկացել են
Խախտել Ֆրանսիական ռեժիմը հարկային։
Յեղել են մեր պատշոնյաների դեմ
Հարձակումներ ավազակային։
Սակայն
Բնիկների վայրագությունները իզո՞ւր են,
Մեր թնդանոթները հզոր են։
Արդեն
Բնիկների 28 գյուղերն ջնջված յեվ լուռ են։
Մեր զոհերի թիվը չնչին է։

Ավազակները դիրքերիցը դուրս են հանված,
Նրանցից—1700 սպանված,
800 հոգի դատվել է,
50 ավազակ գլխատվել է։
Այսպիսով
Հնդկաչինումը Ֆրանսիական—
Կարգն ու հանգիստը
Լիովին հաստատվել է։

Միջանկյալ լրատու։

Ալժիր քաղաքում,
Բաբ Ել Ուեդ թաղամասում,
Յերեկ իրիկուն
Բռնվեց մի արաբ բանվոր—
Անունը
Իբրահիմ Ել Կասում.
Գրպանիցը հանվեց

«ԼԱ ԼՅՈՒԹ ՍՈՍԻԱԼ»—

Բայլեվիկյան լրագիրը
Յեվ Կոմինտերնի ծրագիրը։
Մոսկովյան ագենտներն ուրեմն
Ալժիրումը գործում են,
Նրանք փորձում են
Անբան բնիկներին իշխանության դեմը հանել,
Յեվ բարեհոգի պատշոնյաները վանել,
Ալժիրաբնիկ գյուղացիներին սովաման անել,
Քամել
Պատվաստուք փաստաների յեվ բեյերի արյունը։
Նրանք ուզում են
Ալժիրի հարստությունները Մոսկվա տանել։
Սակայն
Իշխանությունն արթուն է։
Ավազակների դիմադրությունները ջարդում է։
Նրա՛նք,
Վորոնք մերժում են վճարել պետական հարկը,
Նրա՛նք,
Վորոնք խանգարում են ռեժիմն ու կարգը,
Նրա՛նք
Վորոնք իշխանության հիմքերը քանդում են,
Նրա՛նք
Վորոնք անազնիվ, չքավոր, անտուն են,
Նրա՛նք
2000 ավազակներ—
Արդեն Բեդոյի բանդումն են։

Ալլա։
Շարունակում ենք մենք
Ռադիո—ծրագրի հաղորդումը։

Ժամի 17 և կեսին։
Ժամը հոգու և քավության
Յեվ յերկնային արքայության։
Պատվիրակը սրբազան Պապի—
Մոնսինյոր Լեյնոդ—խորհրդանիշը բարության—
Նույնպես հրեյա ազնիվ ռաբբի,
Յեվ մուսուլման մոլլա Նաբին—
Նրանք միասին
Զեզ կհաղորդեն ճշգրիտ լուրեր
Սովետական յերկրի մասին։—
Թե ինչպես են այնտեղ մորթում
Յեկեղեցում պատկվող հարսին,
Հոր և վորդուն,
Նրանց տատին,
Նրանց պապին,
Նրանց փեսին,
Նրանց,
Վորոնք հավատում են
Սուրբ Հիսուսին,
Մեծ Մովսեսին,
Մուհամեդի վսեմ ծեսին։
Հետո սուրբ հայր Ժակը բարի
Կզեկուցի
«Ահա արդեն քանի տարի
Վերջը չկա
Բայշևիկյան ձեռքով թափվող անմեղ արյան»։
Հետո
Կերգի քառաձայն խումբ—
«Սուրբ կույս Մարիամ»։
Հետո
Կերգի բաղաձայն խումբ—
«Քրիստոս հարյավ»։
Իսկ վերջումը,
Հայր Անտոնի հեղ քարոզը—
«Հիսուս Քրիստոսն է սովետից մեծ փարոսը»։

Միջանկյալ։

Ռադիո—Ալժիրին հարց են տվել.
— Վորքա՞ն է պատշոնյաների թիվը պետական
Աֆրիկայումը Ֆրանսիական։
Նրանցից վորքանը բնիկ
Յեվ վորքանը Ֆրանսիացի։

Մենք պատասխանում ենք.
— Աֆրիկայումը Ֆրանսիական
Կան պատշոնյաներ 50,000։
100 բնիկներիցը բացի,
Մնացած 49,900-ը Ֆրանսիացի։
Յեվ Աֆրիկան
Պարտավոր է ապահովել
Նրանց ծախսերը բառացի.—
Խորտիկների,
Գինու,
Հացի,
Բանկության
Յեվ կանացի։

Ռադիո—Ալժիրին հարց են տվել.
— Ֆրանսիական Եկվատորիալ Աֆրիկայումը
Ներկայումը
Վորքան է թիվը բնիկների—
Տղամարդկանց,
Մանուկների,
Կնիկների
Յեվ վորքան եր թիվը նրանց
Անցյալումը։

Պատասխանում ենք անհապաղ։
— Ճշգրիտ թիվը բնիկների—
1911 թվին հավասար եր 10,000,000-ի։
1930 թվին հավասար է 2,000,000-ի։
Պակասածը կլոր հաշվով 8,000,000 է։
10,000,000-ից 8,000,000-ը հիմի չկա։
4,000,000-ին կոտորել է Մոսկվայի դաժան Չեկան.

ՀԱՅԿ-ՍՍՀ
Մ. Մ. Ա Մասիսեան
Մ. ՍԱՍՈՒՆԻՑՈՒ Ա. Վ.

1,000,000-ին չուման տարավ,
1,000,000-ը հիմարի պես մեռավ գնաց սոված-ծարավ,
200,000-ը հիշս իր բնական մահով մեռավ:
Կրկնում ենք մենք
10,000,000-ից 2,000,000 ե մնացել.
8,000,000-ը արքայություն ե գնացել:
Այս խնդրումը
Ֆրանսիան յերբեք մեղավոր չի՛,
Բնիկների մահը նոր չի՛,
Ու թող կորչի՛
Բայլեվիկյան զրպարտանքը:

Ապրո՛:
Շարունակում ենք մենք
Ռադիո—ծրագրի հաղորդումը:

Ժամի 19-ին:
Մադամ Մենենին
Կպատմի մի ծիծաղաշարժ եպիզոդ.—
«Ֆրանսիացի պարոն կապիտանը Սուդանի արաբական պոռնկատանը»:
Այս պատմությունն պատմող մադամը,
Պարոններ,
Յեթե ցանկաք
Կարող ե այցի գալ ձեզ ձեր տանը:

Մեգամ, մեսիո՛,
Տիկիններ, պարոններ,
Յեղեք զթառատ բարություն
Լսելու մի հայատարարություն:—

Ալժիրի Գյուղատնտեսական Ասոցիացիան
Հիանալապես ել ե իր ակցիան:
Պատվավոր Ֆրանսիացիներին
Վարկ ե տալիս
ՀԱՐՅՈՒՐԻՆ ՅՈԹ ՏՈԿՈՍՈՎ.

Վորպեսզի ձեռք գցեն բնիկ Ֆելլահների հողը:
Տեղացի
Կայիդներին,
Փաշաներին,
Բաշաղաներին
Յեվ բեյերին
Վարկ ե տալիս **ՀԱՐՅՈՒՐԻՆ ՔՍԱՆՈՎ,**
Վոր կառավարեն չքավոր Ֆելլահներին:
Վորպեսզի Ալժիրումը չլինի խիստ սով,
Ֆակավահող Ֆելլահների հողերը
Խլելու հույսով,
Տալիս ե վերջիններին վարկ
ՀԱՐՅՈՒՐԻՆ ԻՆՍՈՒՆՅԵՐԵՔ տոկոսով:

Ապրո՛:
Շարունակում ենք մենք
Ռադիո—ծրագրի հաղորդումը:

Ժամի 19 և կեսին:
Հռչակավոր պրոֆեսոր պարոն Լանսին
Կբանախոսի—
«Սովետական հնգամյա պլանի մասին»:
Կապացուցի նա պարզորոշ,
Վոր կատարման դեպքումը պլանի
Բայշևիզմը վողջ Յեվրոպան կկլանի:
Փրկությունը—
Պան-Յեվրոպան ե Բրիանի:

Ժամի 20-ին:
Մուզիկա—«Կուզեյի գրկումդ մարել»:
Մուզիկա—«Փանթալոնս ով ե տարել»:
Մուզիկա—«Որորող լարեր»:
Հետո
Մարմնահույզ պարեր—
«Վայլս»,

«Ֆոկստրոտ»,
«Ֆարել»,
«Տանգո»,
«Բլաք Բըդրն»,
«Զարլստոն»,
«Չարլանդ»։

Հուզիչ հայտարարություն։

Ալժիր քաղաքի զով ծովեզերքին—
Պալմա, բարբարիս, անանասի ծառ։
Ճեմում են այնտեղ տղամարդ յեվ կին.
Հնչում է այնտեղ երիչ յեվ ծիծաղ։
Այնտեղ կան շքեղ հաստաբան, շանսան—
Գիշեր միջնեվ լույս լի հանախոռդով.
Հոսում է լիկյոր, գինի յեվ շամպայն.
Կանանց կրքերն ու զգիրը հորդող։
Նուրբ յեվրոպական կերակուր համեղ,
Նույնպես ալժիրյան միջոյ յեվ կուսկուս։
Սպասարկում են որիորդներ անմեղ
Յեվ կատարում են ձեր կամքը սուս-փուս։
Հանեցեք ամեն իրիկուն լինել,
Դյութող, հանելի, անքերի ժամանց
Յեվ պարոնների յեվ սիրուն կանանց։

Ալլո՛։
Շարունակում ենք մենք
Ռադիո—ծրագրի հաղորդումը։

Ժամի 20 և կեսին։
Փարիզյան բորսա—բյուլլետեն։
Տեղեկանք
Ֆրանկի,

Դոլլարի,
Ստերլինգի
Մարկի
Ընթացիկ կուրսի մասին։

Հետո
Պարոն Պուանկարեյի գրամաֆոնն անձնական
Կզեկուցի—
«Ականատեմներն ինչ ասին
Սավետական բանտերի մասին»։
Թե պատվավոր մարդկանց ինչպես են տանջում
Դժոխանման բանտերումը,
Թե ինչպես նրանց աշխատեցնում են սոված
Անտառներումն ու կոլխոզի հանդերումը,
Յեվ թշվառները մեզ ողնությունն են կանչում,
Վոր չթողնենք նրանց Չեկայի ճանկերումը։

Հետո
Կրկին մի զեկուցում—
Սովետների յերկրումն այսոր
20,000,000 բանվորներ կան անտուն,
Բաղցած,
Յեվ ուզղակի կմախք դարձած։
Իսկ մնացած բանվորներն ել
Տերոբի տակը բանում են—
Զար Չեկայի բիրտ ոտիցը,
Զրկանքները լուռ տանում են,
Վոր խուսափեն խոշտանգումից ու մահիցը։

Հետո
Նորից մի զեկուցում
«Սովետական դեմպինգի մասին»։
Սովետական փայտ,
Հաց
Յեվ նավթը միասին—
Յեվրոպայից քշել դուրսը,
Վոր չքանա

Սավետական դեմպինգի հույսը,
Վոր ազատենք Եվրոպան
Ծանր դրությունից,
Եվ Սավետի սպառնացող գերությունից։

Միջանկյալ լրատու։

Ալժիր գավառի Ալֆ անապատում,
Հակա,
Պարսպված բորջումն ապրում են
Տաժանակիրներ **7000** հոգի:
Բանդումը նրանք դասիարակվում են:
Հակվում են յերբեմն դեպի վաս բարքեր,
Եվ չեն ցանկանում
Բանտային որենքն ու կարգը հարգել,—
Փորձում են յերբեմն նեռումը բորջի
Խռովություններ յեվ բունդեր սարքել:
Գարուն թե աշուն,
Ձմեռ թե ամառ
Բանում են որը հիշց տասնեվվեց ժամ:
Գործարանների գործվածքի համար
Հումույթ են հասցնում առաս յեվ եժան:
Եվ տասն յեվ վեց ժամ ամեն մի որում
Կտավ,
Առագաստ հյուսելու համար
Անապատներումն ալֆա յեն քաղում:
Հանախ
Անվրդով,
Հանգիստ
Ու հերթով
Ավազուտներում փոսեր են փորում,
Եվ իրենց ընկեր բնիճապանների,
Ոնի խայթվածից մահացածներին
Թաղում են մեկ-մեկ
Փոսերումը խոր,
Անլաց,
Անժխոր:

Վարձատրվում են բարեխիղճ ու լի
Ալֆա քաղողներն այդ սովորական—
100 գրամ հաց յուրաքանչյուրին
Եվ 4 բաժակ ջուր—վարձքը որական:

7000 հոգուցն այդ տաժանակիր
Յերեք որ առաջ առավոտ վեցին
Թունավորվեցին
Ու մեռան հանկարծ 2000 մարդ:
2000-ն եվ բարեբախտաբար
Թուլակազմ եյին,
Հյուծված,
Անկարող,
Ալֆա քաղելու գործին խանգարող:

Բայլեվիկների ագենտները մութ
Զրպարտանքներ են յերկրում տարածում—
Թե իշխանությունն է սարքել հնուս
Թունավորումն այդ լրիվ մահացու:
Իզո՞ւր զրպարտանք:
Քննիչ հանձնախումբը վստահելի,
(Վորի մեջ մտան
Պատվավոր պարոն սոցիալիստ Ժերոն,
Եվ Ֆրանսիական կոլոնել Մոնդել,
Վրաստիկանապետ պարոն Ժան Լրոու,
Եվ քաջ ցեղապետ Կայիդ ել Քերիմ,
Եվ բարեկրոն հայր սուրբ Ժիրոնդել)—
Քննեց այդ դեպքը խիստ մանրակրկիտ
Տվեց վորոշում—

«ՀԱՆԳՈՒՅՑԱԼՆԵՐԸ ԹՈՒՆԱՎՈՐՎԵԼ ԵՆ ԹՅՈՒՐԻՄԱՑՈՐԵՆ· ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՆՔ ՄԱՀԱՑՈՂՆԵՐԻ ԿԱՆԱՆՑՆ ԱՆՀԱՊԱՂ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԻՆ ՏԱԼ ՄԻԱՆՎԱԳ 4 ԿԻԼՈ ՑՈՐԵՆ»։

Բացի այդ դեպքից, վերջին ամսումը
Ալբ անապատի հենց նույն մասումը
Սպանիական մեծ ձեվի դանակով
500 հոգի յեղան ինքնասպան.
Այդ խնդրումն անշուշտ վոչ մի մեղք չունի
Բորջի հսկիչը բարեխիղճ սպան:

Կարևոր տեղեկանք։

Մեդան, մեսիո՛,
Տիկիններ՛, պարոններ՛,
Գործունյա մարդկանց համար արժուն է
Իմանալ նավային շարժումը
Նավահանգստներումն Ալժիրի,
Նույնպես
Ներածման
Յեվ արտածման հակումը
Վերջին յեռամսյակումը։

Նավահանգիստներ—
Ալժիր,
Բուժի,
Մուդաքանիմ,
Վանե,
Ֆիլիպեվիլ,
Ոռան—

Վերջին յեռամսյակումը
Ժամանել է 32 նավ,
Բերել է Ալժիրին
Սպիտակ գինի մուսուլմանների համար,
Ռ-դը-կոլոն,
Ռ-դը-վիոլեն,
Ռ-դը-ռոզ,
Ցերեսի յեվ երքուցքի ներկ,
Ընտիր յեվ եժան պուդրա,
Մորքի փափկացման կրեմ,
Կեղծամ,

Յեվ մասաժի մաշին,
Բնիկներին համար նույնպես
Խիստ ներգործող թույն,
Յեվ կախվելու պարան անհաշիվ:
Մեծ քանակությամբ տղամարդացնող
Անիարդախ փոշի,
Կանացի կոշիկ,
Ժանյակ,
Հուլունքներ,
Կեղծ մարգարիտներ,
Մանյակ,
Յեվ կոռսեթ,
Գինեթների—հանդերձների,
Յեվ գիշերային շանտանի համար
Հնչեղ յեվ ամուր
Կիթառ,
Դաշնամուր,
Մանդոլին,
Ջութակ:

Այս յեռամսյակումն Ալժիր են յեկել
Ճամբորդներ,
Հյուրեր—
2000 մարդ
Մարսելից,
Հավրից,
Փարիզից,
Լիոնից:—
1500 վանառակներներ,
364 հոգի
Բանկիր,
Սենատոր,
Կոմիսարաժոր,
Յեվ պարլամենտի հարգ անդամներ,
12 հոգի խելոք սոցիալիստ,
Յեվ 100 տուրիստ,
20 դերասան-դերասանուհի,
2 ճարիչ,

Յեվ 2 հոգի պոեմ-ֆուտուրիստ:

Ալժիրյան ափին են դուրս յեկել նույնպես
500 հոգի արբաշում հայրեր կաթոլիկական,
750 կույսեր իգական,
1500 կիսամաշ կանայք փարիզյան մոդով—
Շրթերը ներկած,
Հոնքերը սարքած,
Իգասեռ հոտով,—
Նրանք վաղուց են կարդացել
Սիրո գիրն ու բերական,
Ալժիրում
Նրանք
Դեռ կարող են տալ
Հեզ բնիկներին հանույք սեռական:

Այս յեռամյակում Ալժիրն են յեկել
15,000 ֆրանսիական զորք
Զինված բոլորն են,
3 ժեներալ,
50 կապիտան,
90 կոլոնել:

Նավերի մեկնումն Ալժիրյան ափից:
Յեվ ապրանքների արտահանումը:

Այս յեռամյակում
Մեկնել են նավեր թվով 29:
Յեվ լրիվ բեռնած
Տարել են նորեն
Ալժիրյան ցորեն,
Աֆրիկյան ալֆա,
Ընտիր ձիթայուղ
Յեվ ձիթապտուղ
Ֆոսֆատ,
Ցինկ,
Յերկաթ,
Քարածուխ

Յեվ բուրդ,
Ընտիր ծխախոտ.
Սուրճ,
Բանան,
Առմավ,
Վանատոքի սերուկ—
Կին,
Աղջիկ,
Տղա:

Այլո՛,
Շարունակում ենք մենք
Ռադիո—ծրագրի հաղորդումը։

Ժամի 21 և կեսին։
Տրանսլյացիա Փարիզից—
Մի արարված
Արվեստի գլուխ գործոց—
«Յես մտա քո մոր ծոց»—ոպերետայից։

Այլո՛—այլո՛։
Սե Ռադիո—Ալժիր քի պառլ։
Սե Ռադիո—Ալժիր քի պառլ։

Այլո՛—այլո՛։
Խոսում է Ռադիո—Ալժիրը։
Խոսում է Ռադիո—Ալժիրը։

Մեղմ, մեսիո՛,
Տիկինն է՛ր, պարոնն է՛ր,
Սրանով վերջանում է
Ֆրանսերեն բաժինը։

10 ՐՈՊԵ ԸՆԴՄԻՋՈՒՄ

ՅԵՐՐՈՐԴ ՄԱՍ

Ալլո՜—ալլո՜։
Յակուլ Ռադիո—Ջեզայիր։
Յակուլ Ռադիո—Ջեզայիր։

Ալլո՜—ալլո՜։
Խոսում է Ռադիո—Ալժիրը։
Խոսում է Ռադիո—Ալժիրը։

Յա խավա՛ջա, յա սեդդա,
Պարոննե՛ր, տիկիննե՛ր,
Այսոր բացառիկ վիճումով
Լինելու է ռադիո—հաղորդում
Նույնպես արաբերենով։

Յա խավա՛ջա, յա սեդդա,
Պարոննե՛ր, տիկիննե՛ր,
Ֆրանսիական ասպետ ազգը
Արագացնում է
Ալժիրյան ընիկների
Կուլտուրական վազքը։
Նախկին բարբարոս ընիկներին
Ֆրանսիան արդեն դրդել է
Զգալ գեղի հինը նողկանք։
Ֆրանսիան նրանց կրթել է
Յեվ տվել է նոր կյանք։
Դուք այժմ կլսեք
Արաբական բաժինը,
Հիմի հանդես կգա
Կուլտուրական

Յեվ քաղաքակիրթ Ալժիրը։

Ալլո՜։
Այժմ հաղորդում ենք մենք
Արաբական մասի ռադիո—ծրագիրը։

Առաջին համար։
Արաբական նոր կենցաղի յերգ—
«Մի սպայի դրկեցի։
Հետո արի աբորտը»։—
Կերգի Սալիհե խանում
Յեվ կխաղացնի իր պորտը։
(Խորհուրդ ենք տալիս
Առանձնապես պարոններին,
Յերևակայությամբ տեսնել
Պորտային թրթռումների ակկորդը)։

Համար յերկրորդ։
Կզեկուցի
Հանրային Բարոյականության Պաշտպան Կոմիտեի
Նախագահ
Սիդի Սալիմ Իբն Ֆուադ—
«Բարոյականության ամայացումը
Յեվ կանանց համաձնացումը
Մոսկովումը»։

Հետո,
Յա խավա՛ջա, յա սեդդա,
Պարոննե՛ր, տիկիննե՛ր,
Պահանջվում է
Ձեր սենյակների լույսերի մարումը,
Իրար գրկած
Խավարումը
Լսեցե՛ք
Աբդուլլահ Իբն Թալիբի զրույցը—
«Փարիզուհու և նեգր զինվորի
Սիրո գիշեր հյուրանոցումը,
Իրար ծոցումը»։

15 բոպե պառկա—
Մինչև վերջանա
Ձեր դրկախառն իրարանցումը։—

. . . . . .
. . . . . .
. . . . . .

Միջանկյալ։
Ուրախալի տեղեկանք։

Թույլ տվեք ներել հաջող վերելքը
Կենդանի մսի ազնիվ վաճառքի,
Վոր տալիս է մեզ իր առաս բերքը—
Մեր յերկրի համար անպատճառ հարգի։
Ահա Ալժիրյան կենդանի մսի
Վաճառքն ու անի վառ դինամիկան։

1835-ին պռունիկների թիվ միայն 85։
1852-ին պռունիկների թիվ դարձավ 900։
1900 թվին, պարզ հաշվով—1900։
1914 թվին պռունիկների թիվ—19,000։
1930 թվին—40.000։
1931-ի պլանումը կա 108.000։

Թե մանչ յեվ թե կին—հարկին յենթակա,—
Ով իր կենդանի միսն է վաճառում,
Ամեն մի ամիս գանձին պետական
Ճիշտ 100 ֆրանկ հարկ է վճարում։
Այսպիսով ահա ազնիվ Ֆրանսիան
Յեկամտային աղբյուր է հարում։

Ապրա։
Շարունակում ենք մենք
Ռադիո-ծրագրի հաղորդումը։

Համար յերգողումը։
Մոլլա Հուսեյն կկարդա
Մի հատված սուրբ Ղուրանից։
Հետո
Հեռագրալուրեր
Հանգիստ Թուրանից,
Յերջանիկ Հինդից,
Խաղաղ Չինից,
Ցամաքից
Ու ծովից,
Կովկասի սովից,
Ավերակ Մոսկովից։

Միջանկյալ։
Սրտահուզ լրատու։

Մուհամեդի փոխանորդն Աֆրիկումը—
Շեյխ Ել Արաբ Բին Թանա Սի Բուազ Իզը,
Վորի առաջ խոնարհվում են
Իր հեզ հոտի խելքն ու վիզը,
Վոր իր կրծքին ունի կախած
Պատվո լեգեոնի ֆրանսիական շքանշան,
Վոր կրում է իր թիկունքին
Կարմրավոսկի շքեղ բեռնուս,
Ֆրանսիայի նախագահին
Գրել է սուրբ բարեվազիր։
Շեյխ Ել Արաբ Բին Թանա Սի Բուազ Իզը
Սուրբ նամակումը գրում է,—

«Ով սիրելի պարոն Դյումերգ,
Ով պլանի ընտրյալ վորդի,
Ֆրանսիական մեծ Աֆրիկան—
Ալժիր,
Թունիզիր,

Մադակասկար,
Մարոկ,
Թունիս,
Կոնգո,
Կաբոն,—
Ժողովուրդը նրա միշտ հեզ
Իմ բերանով որոնում է քեզ:
Արդեն լրացավ հարյուր տարի,
Յերբ Ֆրանսիոն բարեհաճեց
Առնել մեզ իր գիրկը բարի:
Հարյուր տարվա մեջը անեց
Յերջանկությունն Աֆրիկայի:
Ալպահը—մեծ աջակիցը
Ֆրանսիական ազգին ահի,—
Թող պահպանի քեզ չարիցը,
Կուրացնի աչքը չարի:
Ո՞վ ալպահի ընտրյալ վորդի,
Կյանքիդ արեվը չմարի,
Անե՞ծք, նզո՞վք շուն շեյթանին,
Լա՛ իլ ալլա՛հ, ասի՛ն, ասի՛ն:

Իմ ժողովուրդը կուշտ ու կուռ,
ապրում է գոհ, անտառապանք,
Մարգարեյին փա՛ռք ու շուքո՛ւր,
Մեծ ալպահին մի՛շտ փառապանք:

Յեղապետներն Աֆրիկայի,
Կայիդները հաղթ յեվ հրակամ,
Հողատերերը բարեսիրտ,
Յեվ սիդիներն առեվտրական,
Բաշաղաներն ու փաշաներ,
Մոլանիներ սուրբ յեվ անարատ—
Ձեր հովանուց չեն բաժանվել
Յեվ ապրում են գոհ, լիառատ:
Ունեն նրանք փարթամ պալատ,
Գինին առատ, խնջույք յեվ յերգ,
Շքանշան, բեռնուս-խալաթ,
Կանայք, մանչեր նկուն յեվ մերկ:

Վորպես տերեր ազնվարյուն—
Ապրում են լավ յեվ անզրկանք,
Հարներ ունեն հարյուր-հարյուր,
Վայելում են սիրո զգվանք:
Ապրում են, վոր հատատ պահվի
Ֆրանսիական որենքն արդար,
Վոր չթողնեն ցեղն զբաղվի
Խռովությամբ պիղծ ու վատթար:

Ո՞վ սիրեցյալ պարոն Դյուսերգ,
Որոնում եմ քեզ ամեն ժամին,
Դուշմանդ պիղծ լինի ու մերկ:
Լա՛ իլ ալլա՛հ, ասի՛ն, ասի՛ն»:

Ալլա՝
Նորից մի լուր՝

Ալժիրյան յերկրի Բուժի գավառում,
Գործադուլ արին
Գյուղատնտեսական բիրս բանվորները
4000 հոգի:
Նրանց 28 ղեկավարներին,—
5 աննամիտներ,
7 հոգի սեվ նեգր,
5 հոգի արաբ,
4 ապանացի,
6 Ֆրանսիացի—
Մեր դատարանը հանեց մի վճիռ
Արդար յեվ վճիռ—
10-ական տարի յուրաքանչյուրին
Անապատում բանդ
Յեվ տաժանակիր ծանր աշխատանք:

Այլո՛։
Շարունակում ենք մենք
Ռադիո—ծրագրի հաղորդումը։

Համար չորրորդումը։
Սիմֆոնիկ նվագախումբը կնվագի—
«Ալժիրական սրբազան յերգումը»։
Թունիսյան լարավոր նվագախումբը կնվագի—
«Ֆրանսիան—հայրենական մեր տունը»։
Արաբական յերկձայն խումբը կերգի—
«Մեր յեղբայրները Մոսկովի ըերդումը»։
Սիմֆոնիկ նվագախումբը կնվագի—
«Les turcos sont des bons enfants»։

Այլո՛։
Ուշադրություն։
Խիստ սրատանջ լուրեր։

Դոմինիկյան Սուրբ Ուխտի հայրերը—
Ուղարկել են Ալժիրի բոլոր վայրերը
Սովյալներին առաջ ոգնություն—
5000 ավեստարան
Թարգմանված արաբերեն,
Նույնպես յեվ 8000 սուրբ վարդարան։

Փարիզից
Ֆրանսիական գաղութների մինիստր
Պարոն Ֆրանսուա Պիեռին
Հեռագրով թույլատրել է
Ալժիրի վարիչ պարոն Բուդին—
Զբավոր կանանց ցույց տալ ոգնություն—
Բացելով կրկին 9 հասարակաց տուն։
Սպասարկելու հասարակաց տան
Բաց անել նորից 13 շանսան։
Յեվ փողոցների ամեն մի կեսում—
Կիսաֆյուրանոց-կիսագինեսուն։

Մեծ Ֆրանսիայի եկվատորիական Աֆրիկայումը
Հենց ներկայումը
Գործազրկության ճգնաժամներ չկան։
Այնտեղ առուտուրն աճում է,
Յեռում։
Ամեն մի կայիդ,
Ամեն մի ագա
Յեվ բեյ
Յեվ սիպի—
Առնում-ծախում է գերիներ բնիկ—
Տղամարդ,
Կնիկ
Թուխ ե՞ ն՞ սեվամորթ.
Այդ բաառում չկա յեվ վոչ մի ամոթ։
Ահա ապացույցն այդ մասին խոսող—
1929 թվի հետ համեմատած
1930 թվին
Ստրկավաճառին արդեն աճել է
50 տոկոսով։

Հույժ կարևոր լուր։

Ամեն մի տարի պարտադիր կարգով—
Ալժիրյան ցեղերն ըստ հրահանգի
Բերում են հանձնում սիրտիր կամքով
Բաղտապետին Ալժիր քաղաքի—
Տասիցը մինչեվ քսան տարեկան
Աղջիկներ դեռ կույս, սիրուն յեվ հարգի։
Յեվ քաղաքապետ պարոն Բրյունել
Թողիչ, դեռահաս այդ աղջիկներին
Հանձնում է Ֆրանսիական քաջ ազաներին—
Ժամանցի համար հարն կամ սիրեկան,
Յեթե կույսերը լինեն դուրեկան։

Այս տարվա համար հայթայթումն այսպես—
Աբդել Քերիմի ցեղը պիտի տա 54 աղջիկ։
Աբդել Քադիրի ցեղը պիտի տա 40 աղջիկ։
Կուսկուսի ցեղը պարտավորվում է 42։

Աբդել Հուսեյնի ցեղը տալու յե 33:
Աբդել Աբբասի ցեղը տալու յե 25 աղջիկ:
Կրկնում ենք կրկին
Աղջիկներն անուշ
Պետք է վոր լինեն
Սիրուն,
Գրավիչ,
Կույս
Ցեվ նազանի,
Մորքերը թավիշ:

Ալլո՛։
Շարունակում ենք մենք
Ռադիո—ծրագրի հաղորդումը։

Համար հինգերորդումը։
Զեկուցում է
Լա Բանկ դը Լ'Ալժիրի դիրեկտոր
Պարոն Ժան Հեկտոր—

Թե վորքան հում նյութ է տալիս Աֆրիկան
Ֆաբրիկներին,
Զավոդներին ֆրանսիական։
Ցեվ թե վորքան շահ է բերում
Ֆրանսիական կապիտալն Ալժիրում։

Կարևոր հայտարարություն։

Վանառում են ամեն ինչ—
Ոռիաց,
Ռուայալ,
Ո բամարշե.
Պտի պարիզիեն,
Լուվր,
Ո պրենտան,
Վի կոլոնիալ,
Լա վի մոնդիալ—

Փարիզյան մեծ վանառատները:
Մատչելի յեն միշտ գները,
Ձեր ցանկացածն ուղարկվում է ձեր տները:

Բաժանմունքներ
Ալժիրի ուր քաղաքներում:
Շտապեցե՛ք,
Շտապեցե՛ք,
Շտապեցե՛ք,
Ցեվ գնացե՛ք,
Մի փախցնեք պատեհ առիթ:

Ալլո՛։
Շարունակում ենք մենք
Ռադիո – ծրագրի հաղորդումը։

Համար վեցերորդումը։
Զեկուցումը
Արվեստագետ—գիտնական պրոֆեսոր
Պարոն Գրեգուար Վիստի—

«ԱՆԿՈՒՄԸ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵՋ
ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ԿՐԹՈՒԹՅԱՆ,
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ,
ՑԵՎ ԱՐՎԵՍՏԻ»։

Ցա խավչա, յա սեղդա,
Պարոննե՛ր, տիկիններ,
Ահա վերջացրինք արաբերեն մասի
Ռադիո—ծրագրի հաղորդումը։

Նվագախումբը կնվագի—
«Մարսելյոզ»։

Ալո՛ — ալո՛։
Յակուլ Ռադիո — Ջեզալիր։
Յակուլ Ռադիո — Ջեզալիր։

Ալո՛ — ալո՛։
Խոսում է Ռադիո—Ալժիրը։
Խոսում է Ռադիո—Ալժիրը։

Յա խավնջա, յա սեղդա,
Գարոնոնե՛ր, տիկինոնե՛ր,
Հայտարարվում է 10 բոպե ընդմիջում,
Վորից հետո կսկսենք
Մեր այսորվա ռադիո-հաղորդումը։

ՊԱ
ՈՒ
ՉԱ

1931
Փետրվար,
Ցերեվան։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ Գրադարան
ՀՍԽՍՀ-ՍՍՀ
Մ. Աբեղյանի անվան

404
44

ԳԻՆԸ 1ռ.20կ.

АЗАТ ВШТУНИ

ГОВОРИТ
РАДИО-АЛЖИР

ГИЗ ССР АРМЕНИИ, ЭРИВАНЬ

«Ազգային գրադարան»
NL0363536

57694